

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 16 ՀՈԿՏ., 1930

ԹԻԻ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՍ.Ի ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ԹՐԳՄ. Բ. Կ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

ԽԱԶԻ ՏՕՆԸ

ՈՒՆԿՆԴԻՐ ՄԸ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԸ

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

ԱՄՓ. Տ. Ճ. Խ.

ԱՅԼԵՒԱՅԼ

ՓՐԻՆՍ ԷՏՈՒՐՔՏ ԿԴԶԻՆ

ՄԱՐԴՈՒՆ ԳԼԽԱՒՈՐ ԴՈՐԾԸ

ՓՐՈՅ. ՍԷԼՊԻ

ԱՆԿԼԻԳԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ի ՊԱՏԻԻ ԿԱԼՎԻՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՃ ՀԱԼԷՊ

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՁԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազատ քաղաքացիական շարժման
գրասենյակին

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՊԻՆ

Ու քամիին զոտում գոչումին մէջ ընթրուճ յանկարծակիի եկաւ լսելով բարձրաձայն խնդալու ձայն մը. ու ալ աւելի զարմացաւ երբ տեսաւ որ այդ ձայնը իր քեռորդին ձայնն էր։ Ակնթարթի մը մէջ տեսարանը արդէն փոխուէր էր, ու հիմայ Ողին և Սքրուճ կը գտնուէին չոր, փայլուն ու զուարթ սենեակի մը մէջ։ Ողին լուռ ու ժպտուն դէմքով ու համակիր սրտով կը դիտէր Սքրուճի քեռորդին՝ որ իր խնդացած ատեն կարծես թէ աշխարհիս ամենէն երջանիկ մարդն էր։

Եթէ դուն Սքրուճի քեռորդիէն աւելի զուարթ մարդ մը կրնաս գտնել այս աշխարհիս մէջ, կ'աղաչեմ ինծի լուր տուր, և մեզ իրարու ծանօթացուր, որովհետեւ ատանկ մէկու մը հետ ծանօթանալ չափազանց փափաքելի է ինծի համար։

Իրողութիւն է թէ այս աշխարհիս վիշտերուն ու հիւանդութիւններուն մէջ չկայ այնքան սփոփիչ ու մխիթարական ազդեցիկ դարման մը՝ որքան գոհ, զուարթ ու երջանիկ սրտէ մը բըխած կուշտ ու կուռ խնդուք մը բարձրաձայն որ շուտով վարակուելով ընկերութեան բոլոր անհատներուն վրայ՝ կուտայ անոնց եւս ճաշակը ուրախութեան, երանութեան ու վայելքի։

Կ'արժէր տեսնել Սքրուճի քեռորդին՝ որ իր խնդալու սաստկութենէն կուշտեւր կը բռնէր չը պայթելու համար, գէմքին վրայ նկարելով միմոսական բոլոր ծափածուութիւնները, գոչելով բարձրաձայն «հա՛, հա՛, հա՛, հա՛»

Ու ամենքը միասին ծիծաղեցան։

Սքրուճի քեռորդին յիշեց նաև ընթրուճի «գետինն անցնի Ծնունդը» խօսքը, որուն վրայ ամէնքն ալ ափի բերան մնացին։

«Ծիտակը խօսելով՝ այս մարդը խիստ տարօրինակ արարած մըն է», շարունակեց Սքրուճի քեռորդին, «ասկէ աւելի քաղձրաբարոյ կրնար ըլլալ, բայց չէ, և իր այս խիստ բնաւորութեան վընասը իրեն կ'ըլլայ, ի՞նչ կրնանք ընել։» Սքրուճի քեռորդին իր քոյրերը Ծնունդի առթիւ իր տանը մէջ հրաւիրած էր, ասոնցմէ մէկը խօսակցութեան մէջ մըտնելով ըսաւ իր եղբորը. «կարծեմ ընթրուճ շատ հիւրասէր է, անանկ չէ՞, անգամ մը դուն ասանկ կ'ըսէիր»

— Ի՞նչ օգուտ, սիրելիս, պատասխանեց եղբայրը, իր գիզած հարստութիւնը երբեք օգուտ չունի իրեն, երբեք մէկու մը բարիք չ'ընէր, գոնէ ինքզինքը հանգիստ ընել ալ չի գիտեր, խորհիւ չի գիտեր, և ատոր համար թշուառ է, եթէ՛ խելք ունենար, մեզի՛ կ'օգնէր, հա՛, հա՛, հա՛։

«Ինծի անտանելի կ'ուզայ ասանկ մարդ մը», ըսաւ իր քոյրը, ու միւս քոյրերն ալ նոյնը կրկնեցին։

— Չէ, ինծի համար այդպէս չէ, պատասխանեց եղբայրը, ես իրեն կը մեղքընամ, և բնաւ չեմ կրնար անոր բարկանալ, եթէ նոյն իսկ բարկանալ ուզեմ, քանզի իր գէշ բնաւորութենէն ինքն է որ շարունակ վնաս կը կրէ, ի՞նքը միայն։ Օրինակի համար, խելքին փչեր է որ մեզ արհամարհէ, ասկէ ի՞նչ կ'ելլէ, ինքը կը զրկուի մեզի հետ ճաշելու վայելքէն։ (Շարունակելի) 23

ԿԱՐԴԱՅԷ՛Ք

«Նոր Աւետարան»ի յաջորդ թիւին մէջ Ր. ԹԱԿՈՐԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ. Բիւզանդ եզրիտանի,
ԱՐԴԻ ԵԿԴԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՎԵՐ.
Հ. Համբարձումեանի,
ԳԻՐԲԵՐԸ, ՎԵՐ. Կէօքկէօղեանի,
ՄՍԵՂԷՆ ՄՆՈՒՆԴԸ, Տոգթ. Ա. Ծէպէճեանի։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 16 ՀՈԿՏ., 1930

ԹԻԻ 18

ՀԱՅ ԱՒԵՏԱԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻԾԸ

Դ.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Քրիստոնեայ եկեղեցին զրիթ է ըս-
կիզբէն ի վեր ունեցած է իր դպրոցը,
ուր աշակերտը և նորագործը կը հմտա-
նային կրօնական և եկեղեցական գիտե-
լիքներու, որոնցմէ զուրս ուրիշ նիւ-
թերու մասին ծանօթանալ աւելորդ կը
նկատուէր, զանոնք հեթանոսական հա-
մարելով: Բայց երբ կամաց կամաց
քրիստոնէութիւնը ընդունողներուն մէջ
ուսեալներու և գիտուններու թիւը
սկսաւ չատնալ՝ ոչ-քրիստոնէական նը-
կատուած գիտութիւններու հանդէպ
արհամարհոտ գիրքը մեծապէս փոխուե-
ցաւ, քրիստոնեայ ուսումնասէրներ սի-
րով և յարգանքով կարգացին նաեւ հե-
թանոս կարծուած փառաւոր Հելլէն զը-
րականութիւնը, որուն ազդեցութիւնը
չատ զգալի եղաւ յետագայ դարերուն
մէջ:

Քրիստոնէութիւնը պետական կրօնք
դառնալէ և մանաւանդ Արեւմտեան Հը-
ռովմէական Կայսրութիւնը կործանելէ
հտքը, երբ Կաթոլիկ եկեղեցին սկսաւ
միահեծան իշխել Եւրոպայի մէջ, թանձր
խաւար մը պատեց ամէն տեղ, եկեղե-
ցին ոչ միայն կրօնական այլ նաեւ կըր-
թական և գիտական բացարձակ հեղի-
նակութիւն մը եղաւ, եկեղեցիին կող-
մանէ ունէ նիւթի մը մասին յայտնուած
գաղափար մը անժխտելի ճշմարտու-
թիւն մը գարծաւ: Ամէն տեղ տգիտու-
թիւնը տիրեց, որ լուսաւոյն սատարը

հանդիսացաւ ինկած կրօնականութիւնը
երկար ատեն պահելու մէջ:

Ուշակիրներու արշաւանքները և ա-
պա Բիւզանդական (Արեւելեան Հռով-
մէական) Կայսրութեան անկումէն (1453)
հտքը Իտալիա և Եւրոպական տարրեր
երկիրներ ապաստանող Յոյն փիլիսո-
փաները և իրենց հետ բերած հախա-
քրիստոնէական և քրիստոնէական յու-
նարէն ձեռագիրները մեծ պատճառ մը
եղան Վերածնունդը (Ռենէսանս) յառաջ
բերելու Եւրոպայի մէջ: Այս լուսաւո-
րումի շարժումը Բարեկարգութեան ձե-
ւը առաւ Գերմանիոյ մէջ, ուր կրօնա-
կան և մշակութային լուսաւորումը պահ
մը զուգընթաց գնաց: Մեղանդթոն,
Հուտերի աջ թեւը, քաջ հելլենագէտ մըն
էր, որ ջատագովէ էր թէ կրօնական և
թէ աշխարհիկ նիւթերու ուսուցման,
այսինքն թէ հոգիի և թէ մտքի լուսա-
ւորումին: Թէ բարեկարգեալ եկեղե-
ցիները որչա՞փ եւ ինչպէ՞ս հաւատարիմ
մնացին այս հոգիի և մտքի ներդաշնակ
սնուցման սկզբունքին՝ մեր նպատակէն
զուրս է խօսիլ: Բայց Աւետարանու-
թիւնը իր ազատական խմբումով առա-
ւել կամ նուազ չափով պաշտպանած է
սա թեզը թէ հոգիին հետ միասին միտքն
ալ պէտք է լուսաւորուի:

Եւ սակայն ինչո՞ւ այս ներդաշնակ
զատարարութիւնը պէտք է չեղտել:

Պարզ իրողութիւն մը կրկնած

կ'ըլլանք երբ ըսենք թէ ժԹ. դարու կէսէն առաջ տգիտութեան թանձր մշուշին մէջ կը քալէր Հայութիւնը, թէ՛ աշխարհականը և թէ՛ կրօնականը մութին մէջ կը խարխափէին, հազիւ սակաւաթիւ լուսաւորեալ անհատներ հոս հոն ակար լոյս մը կը սփռէին: Բայց այս վիճակը չէր կրնար երկար տևել, զանազան միջոցներով արեւմտեան քաղաքակրթութեան հետ շփում ունեցող ուսումնատենչ Հայը առաջին առթիւ ջանաց իր այս բնագոյն յազուրդ տալ օտար և ազգային կրթական հաստատութիւններու մէջ, որոնց մէջ կարեւոր տեղ գրաւած են աւետարանական հաստատութիւնները:

Մերձաւոր Արեւելքի մէջ Աւետարանական կրթական հաստատութիւններու ուսումնական ծրագիրները ոչ-կրօնական նիւթերու ճոխ ցանկ մը կը պարունակէին, որոնց մէջ գիտականը մեծ տեղ կը գրաւէր: Եւ սակայն նախակրթարանի առաջին տարիէն սկսեալ մինչև գոլէճի վերջին տարին բոլոր ոչ-կրօնական նիւթերը կ'ուսուցուին նախ՝ ոչ թէ անոր համար որ ուսանողը պարզապէս թուագէտ մը, պատմագէտ մը, օրէնսգէտ մը, բժիշկ մը, եայլն գառնայ, այլ այս բոլորը սորվի որպէսզի աւելի մեծ նպատակ մը իրականութիւն դառնայ: Աւետարանական եկեղեցին այնչափ մեծ կարևորութիւն տուած է դպրոցներուն որ շատերուն մտքին մէջ աւետարանական և կրթական շարժումները նոյնիմաստ նկատուած են: Այսպիսիներ Աւետարանական եկեղեցիին այնչափ արժէք կուտան որչափ վերջինը իրենց դպրոցական պէտքին գոհացում կուտայ: Ահա այս սխալ ըմբռնումէն մեծապէս տուժած է Աւետ. եկեղեցին:

Երկրորդ՝ Աւետ. եկեղեցին դպրոցներուն մեծ կարեւորութիւն կուտայ ոչ թէ՛ պարզապէս մատաղ սերունդը իր եկեղեցիին կապելու համար, անոր հոգիին

մէջ գրողմելով կրօնական նախանձայնութիւն մը և անոր մտքին մէջ կաղապարելով իր վարդապետութիւնները, այլ տակէ շատ աւելի բարձր նպատակի մը համար: Ասիկա ճշմարտութիւնը լալէ չի դադրիր երբ նկատի առնենք սպարազան թէ շատերը աւետարանական դպրոցը՝ միայն այս ակնոցով գիտած և այդպէս ալ ներկայացուցած են յաճախ: Աւետարանականը՝ դպրոցը անհրաժեշտ նկատած է պարզապէս հմուտ միտքեր կամ եկեղեցապաշտ կրօնամոլներ յառաջ բերելու համար չէ, այլ առողջ, հաւասարակշռեալ, ողջամիտ, և ուսեալ հոգեւոր նկարագիրներ արտադրելու համար: Աւետարանական դպրոցը ձախտած պէտք է նկատել երբ միայն լուսամիտ բայց նկարագրիչ գութիկ, եկեղեցամոլ բայց հոգեւորապէս և բարոյապէս անվստահելի մարդեր կ'արտադրէ: Աւետարանական դպրոցը իր պաշտօնը լրիւ կատարած կ'ըլլայ երբ մտքուր նըկարագրիւմով բժիշկներ, անխարդախ առեւտրականներ, վստահելի օրէնսգէտներ, հոգեւոր տեսիլքի և կեանքի տէր գիտուններ կ'արտադրէ: Անկրօն կըրթութիւնը քանդիչ է. տգէտ կրօնասիրութիւնը կաշկանդիչ է և թշնամի յառաջդիմութեան, և վերջապէս կը յանգի անբարոյացումի, կրօնական և եկեղեցական կեանքի անկումի: Տգիտութիւնը բարեպաշտութիւն չէ, ոչ ալ անկրօնութիւնը՝ գիտականութիւն:

Ահա այս է և այս պէտք է շարունակէ ըլլալ Աւետարանականութեան ըմբռնումը կրթութեան մասին:

Ուէ հասարակութեան մէջ միայն սակաւաթիւ մարդիկ կրնան ՄԵՍ ԸՆԴԱՐԲայց ամէն տեղ ամէն մարդուն առիթ կը տրուի ԲԱՐԻ ԸՆԴԱՐԻ:

ՈՒՒԼԵՐՄ Բ. ՐԻՉԱՐՏՍ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

5. ՀՕՐԸ ԿԱՄՔԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ՝ ԿԵԱՆՔԻ,
ԻՍԿ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՄՔԻՆԸ՝
ՄԱՀՈՒԱՆ ԿՄԱՌԱՋՆՈՐԴԷ

Անձնական կեանքը, իբր հօրը հոգիին սերունդը ճանչնալը կեանքի իմաստութիւնն է: Մարդիկ իրենց առջև ֆիզիկական կեանքի նպատակներ կը կանգնեն և այդ նպատակները հետապնդելով ինքզինքներն և ուրիշները կը յոգնեցնեն:

Հոգեկան կեանքի վարդապետութիւնը ընդունելով և մարմնին քիչ հնազանդելով հոգեկան կեանքին մէջ լեցուն գոհունակութիւն կը գտնուի:

Թիսուս իր աշակերտներուն կ'ըսէ. «Մարդուն ճշմարիտ կերակուրը Հայր-հոգիին կամքին կատարումն է:» (Եւասիկա ճիշդ է: Մեր ամբողջ կեանքը հօրը կողմէն սիրմանուած կեանքի պատուհներուն ամբողջութիւնն է: Ու այդ պատուհները մեր կատարած բարի գործերն են:

Պէտք է ունէ բանի համար մեր ունեցած բոլոր տենջանքովը ապագային սպասենք: Պէտք է առանց կեանքի մէջ մեր ունեցած վիճակը նկատի առնելու, բարիք ընենք:»

Թիսուս, երբ անգամ մը Երուսաղէմի մէջ սալոն մը կը գտնուէր, տեսաւ որ մօտը հիւանդ մը պառկած հրաշքի մը կ'սպասէ, մաքրուելու համար: Թիսուս մօտեցաւ և ըսաւ. «Հրաշքէն մի սպասէր մաքրութիւնը, այլ ապրէ կեանքը ոյժդ գործածելով, սակայն զայն քեզի նպատակ մի ընելու:» Անգորը հնազանդեցաւ, ելաւ ու քաղց:

Ուղղափառ Փարիսեցին այս տեսնելով սկսաւ յանդիմանել Թիսուսը, իր ըսածին և Շաբաթ օրը հիւանդ մը բժշկելուն համար: Թիսուս պատասխանեց. «Նոր բան մը չըսի: Մեր հասարակաց Հօր հոգիին ուժը գործածելի:

Ան կ'ապրի ու կեանք կուտայ մարդոց եւ ևս ալ նոյնը ըրի: Ամէն մարդու պարտականութիւնն է առանկ գործել: Ամէն մարդ ազատ է. կրնայ ապրիլ կամ ոչ: Ապրիլ կը նշանակէ հօրը կամքը կատարել, որը ուրիշներու բարիք ընել է: Չապրիլ կը նշանակէ իր անհատական կամքը կատարել, այսինքն ուրիշներուն բարիք ընելուն մասին չխորհիլ: Ամէն մարդ ազատ է բարիք գործել կամ ոչ, այսինքն կեանքը շահիլ կամ կորսնցնել:

«Մարդուն ճշմարիտ կեանքը կը նմանի հետեւեալ առակին: Տէր մը կարեւոր գումար մը իր գերիներուն յանձնելով կ'ըսէ, որ շահագործեն: Ոմանք կը շահագործեն, ոմանք ոչ: Վերջինները իրենց յանձնուածը տեսողութիւն կը ծածկեն: Տէրը վերագարծին հաշիւ կը պահանջէ: Անոնք, որ շահագործած են իրենց ունեցածէն աւելին կ'ստանան իսկ միւսներէն ունեցածներն ալ կ'առնէ:

«Տէրօջը թանկագին ստացուածքին կտորը մարդուն հոգին է, որ Հայր-հոգիին որդին է: Ան որ հոգի-կեանքին համար կը գործէ, կ'ընդունի անհուն կեանքը, իսկ ան որ չի գործեր՝ այս անցաւոր կեանքն ալ կը կորսնցնէ:»

Ճշմարիտ կեանքը մարդկային հասարակական կեանքն է և ոչ թէ անհատականը: Իւրաքանչիւր ուր գործելու է ուրիշներուն կեանքին համար:

Թիսուս անցաւ անապատը, ուր գացին շատ մը մարդիկ: Իրիկունը՝ աշակերտները հարցուցին. «Ինչպէ՞ս պիտի կերակրինք այս ամբողջը:» Հետեւորդներէն ոմանք ոչինչ ունէին: Մէկը կար, որ հաց և ձուկ ունէր: Թիսուս ըսաւ. «Տուէք հացը ու ձուկը:»

Առաւ նկանակները և քիչ հոգ տուաւ աշակերտներուն, անոնք ուրիշներու և այսպէս շարունակաբար, հացը չ'սպառած բոլորն ալ կշտացան: Թի-

սուս ըսաւ. «Ամէն ոքի հաց առնելը անհրաժեշտ չէ, կարելորդը Հոգիին պահանջածին պէս ընելն է, այսինքն ամէն ոք պարտի ունեցածը ուրիշներուն հետ բաժնել: Մարդուն ճշմարիտ կերակուրը Հօրը Հոգին է: Մարդ միայն հոգիով կ'ապրի: Կեանքի մէջ ամէն բան ստորագասելու է անոր, որովհետեւ կեանքը կը կայանայ կեանք-Հօր կամքը կատարելուն մէջ և ոչ թէ անհատական կամքը գործադրելուն մէջ: Հօրը կամքը, մարդոց տրուած հոգիին կատարեալ կեանքն է, որ պիտի մնայ մարդոց մէջ և հոգիին կեանքը պիտի տուէ մինչև մահ: Հայրը, կեանքի աղբիւրը, հոգի է: Քանի որ հօրը կամքը կատարելն է կեանքը, ուրեմն մարմինը պէտք է ըստորագասել հոգիին: Մարմինը հոգեկան կեանքին կերակուրը, նիւթն է: Հոգին կ'ապրի առանձինն, մարմինը ձգեցով:»

Յիսուս իր աշակերտներէն մէկ քանին ընտրեց և հոգեւոր կեանքի վարդապետութիւնը ուսուցանելու համար ամէն կողմ ղրկեց ըսելով. «Հոգեւոր կեանքը ուսուցէք պատշաճօրէն, հրաժարելով մարմնական բոլոր ցանկութիւններէն և ձեր անձին համար ոչինչ ունեցէք: Հալածանքի, զրկանքի ու նեղութեան պատրաստուեցէք: Անոնք որ մարմնական կեանքը կը սիրեն պիտի ատեն, հալածեն և սպաննեն ձեզ: Բայց մի վախնաք, եթէ Հօրը կամքը կատարէք հոգիին կամքը պիտի ստանաք, որը ոչ ոք պիտի կրնայ առնել ձեզմէ:» Աշակերտները գացին և վերագառնալով յայտնեցին թէ «ամէն չարին վարդապետութիւնը կը պարտուէր:»

Այն ատեն Փարիսեցիները ըսին Յիսուսի. «Եթէ քու վարդապետութիւնդ չարին յաղթել իսկ, ինք իր մէջ չարիք մ'է, քանզի անոնք որ զայն կատարեն մեծ կարօտութիւն պիտի քաղեն:» Յիսուս պատասխանեց. «Ձարը չարին չի

կրնար յաղթել: Եթէ չարը պարտուած է, ըսել է բարիէն պարտուած է: Բարութիւնը հաւասարապէս բոլոր մարդոց համար Հայր-հոգիին կեանքն է: Ամէն մարդ իր գիտութիւնէն կ'օգտուի, եթէ ուէ մարդ այնպէս գործէ, որ իր ծանօթութիւններէն ուրիշներն ալ օգտուին, այն ատեն բարիք ըրած պիտի ըլլայ, ինչ որ մարդը կը կամի: Ասկէ կը հետեւի թէ Հայր-հոգիին կամքը կատարելը լաւ արդիւնք կուտայ, եթէ նոյնիսկ կատարողը տանջանքի կամ մահուան ենթարկուի:» (Շար.)

Պէյրուք Թարգմ. Բ. Կ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԽԱՉԼԵՐԱՅԻ ՏՕՆԸ

(Պէյրութ-Քէմփի Սբ. Խաչ
եկեղեցիին մէջ)

Սբ. Խաչի պատ. Թաղական խորհուրդը Տ. Եղիշէ Կարօեան Ս. Արքեպիսկոպոսի բարեհաճ արտօնութեամբ հրաւիրած էր Բարպէն Սրբազանը պատարագելու:

Երկուեւ ծովածաւալ բաղմոթիւն մը ժամը 5էն իվեր լեցուցած էր եկեղեցին և հին պապենական դրոփումով կը հետեւէր արարողութեան: Ժամը Տ. 30ին զգեստաւորուած Էկեղեցի առաջնորդուեցաւ Բարպէն Սրբազանը և պատարագի արարողութիւնը լրացնելէ հտք իբր ընաբան առնելով Դաղտ. 2. 14 համարը. «Քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յս. Քրի խաչովը, որ անով աշխարհ ինծի խաչը ելաւ և ես աշխարհի:» Եւ տուաւ հոգեշունչ ու յուզիչ քարոզ մը մօտաւորապէս հիտեհալ կեդրոնական գաղափարներով: «Խաչի տօնն է այսօր. դարերով տօնած ենք և դարերով պիտի տօնենք. համարձակօրէն ան կը տնկենք մեր եկեղեցիներուն, զերեզմաններուն և այլ հիմնարկներուն վրայ, իսկ Հայ եկեղեցին

համարձակօրէն և հպարտ չքաշուիր ամէն օր խաչակնքելէ։

«Ուաչի ուսումը շատ երկար է։ Ամբողջ կեանք մը կարելի է տրամադրել և տակաւին քիչ զգալ։ Վեց տարի դասախօսեցի Ս. Յակոբի մէջ. բայց դեռ անհուն նիւթ կար։

«Ուաչը փայտի, արծաթի, ոսկիի կամ աղամանդներու կտորները չէ։ Անոնք ոչինչ են։ Ուաչը պաղափար մ'է։ Աստուծոյ Որդին խաչին վրայ արին կը հոսեցնէ։ Անոր փրկարար արիւնը որպէս կնիք իր քարոզած ճշմարտութիւններուն խաչէն կը հոսի։ Ահա, այս է խաչին նշանակութիւնը։ Ասոր համար է, որ Պօղոս Առաքեալ հակառակ որ Հրեայ էր ցեղով, կուսակցութեամբ՝ Փարիսեցի, զարգացումով՝ Գամաղիէլի ոտքը մեծցած, քաղաքացիութեամբ՝ ի ծննդենէ Հռոմէացի, նախանձախնդրութեամբ՝ հեղեցիին հալածող, ոճրագործներու յատկացուած անարգ խաչը իր պարծանքը կը համարէ։

«Հպարտանալու շատ պատճառներ կրնանք ունենալ։ Մէկը՝ գեղեցկութեամբ, մէկը՝ գիտութեամբ, մէկը՝ հուրընտութեամբ, ուրիշ մը՝ առողջութեամբ, սակայն Ոսկերեքան ըսած է. «Ձեր հոյակապ շէնքերը, մարմարաշէն օանդուխներն ու նրբահիւս սիւնները, ճոխ սեղանները, ոսկեայ սպասները և այսօրինակ բոլոր պերճանքները մի միայն մէկ բոցի լեզուով կրնան փռչիւնալ, ինչպէ՞ս ուրեմն վստահիլ այդ վաղանցուկ առարկաներուն։ Գեղեցկութեամբ կը հպարտանաք ով այր և կին, սակայն ձեր գեղեցկութիւնը սիրամարդին պօչին համեմատութեամբ ո՛ւր կը մնայ։ Սիրամարդին պօչը չգերազանցող այդ սնտախ շուքին կարելի՞ է վստահիլ ու հպարտանալ։

«Այոպէս է սիրելիներ, այս ամէնը անարժէք են, ատոր համար է, որ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Աշխարհ ինծի և

ես աշխարհի խաչը ելած եմ։

«Անշուշտ պիտի հարցնէք խաչը ի՞նչ կրնայ ընել, որ իրմով պարծենանք։

«Փրտեմ ներկաներուն մեծ մասը միայն զիս տեսնելու կամ նոր ծայն մը լսելու եկած են և ոչ թէ խաչին հաւատքը հրապուրած է զինքը։ Վնաս չունի քանի եկած էք լսեցէք։

«Ուաչը կուտայ ամէնէն ճշմարիտ ազատութիւնը։ Կաշկանդում չկայ. խաչին համար թլփատութիւնն ու անթրլփատութիւնը անարժէք են, կարեւորը կեանքն է. հաւատքն է։

«Ուաչը կուտայ ամէնէն ճշմարիտ հանգիստը։ Ո՛վ, ո՞ր կրօնական պետը կամ գիտնականը կրցաւ ըսել. «Եկէք ինծի բոլոր յոյնած ու բռնաւորուածներ և ես ձեզ պիտի հանգչեցնեմ»։ Գացէք խաչին ու ալ հոգ չպիտի ունենաք։ Ուաչին պացողը կեանքն ու մահը հաւասար ժպիտով կը դիտէ։ Մտքի, հոգիի հանգիստը հոն է։ Փորձեցէք։

«Ուաչը կուտայ ամէնէն ճշմարիտ երջանկութիւնը։ Ի՞նչ է երջանկութիւնը, չէ՞ որ ներքին զոհունակութիւն մ'է և խաչին ապաւինողը, խաչին վստահողը ամէնէն աւելի ներքին զոհունակութիւն մը կ'ունենայ։

«Ուաչը կուտայ ճշմարիտ սէրը։ Գլորիստոս, Աստուծոյ Որդին, այնքան սիրեց որ մեռաւ, կեանքը տուաւ։

«Ահա թէ ինչո՞ւ խաչով պէտք է հրապարտանանք։

«Յաւալի է սակայն, որ եկեղեցիներն ալ իրենց հպարտանալու պատճառը փոխած են։

«Կաթոլիկ եկեղեցին կը հպարտանայ իր մեծագօրութեամբ, պատրաստուած կղերականութեամբ, հսկայ բանակով, հարուստութեամբ ու այսպէս վաղանցուկ արժէքներով։ Բողոքականութիւնը կը հպարտանայ իր միախոնարական կաղմակերպութիւններով, հաւատքի

պարզութեամբ, կրօնական բարոյակա-
նութեամբ, այսինքն չծխելով, չխմե-
լով, չհայհելով*։ Մեր եկեղեցին ալ իր
հպարտանալու պատճառները ունեցած է
և ունի, սակայն այս ամէնը ոչինչ են։
Մէկ պատճառ ունինք հպարտանալու և
այն, «Բրիստոս խաչը ելաւ»։

«Պիտի ըսէք ինծի, Սրբազան, ի՞նչ
կը խօսիս մեզի. կրօնը դուք կղերա-
կաններդ հիմնած էք խաբելու համար և
թէ հիմա մեզի հաց տուր, դրամ տուր,
խաչը ի՞նչ պիտի ընենք, եկեղեցին
ինչ պիտի ընենք»։

«Եթէ վստահ ըլլամ թէ իրաւ կղերա-
կաններու հիմնած կեղծ հաստատութիւն
մ'է եկեղեցին, ես ալ ձեզ հետ կը միա-
նամ ու կը քանդեմ այս եկեղեցին։ Ան-
շուշտ եկեղեցի ըսելով չեմ հասկնար
չէնքը, այլ հո՛ն, ուր երկու կամ աւելի
հոգի կը միանան պաշտել զԱստուած»։

«Երկար ուսումնասիրութիւններովս
եկած եմ այն եզրակացութեան թէ՝ Հա-
յը առանց կրօնի և մանաւանդ առանց
Առաքելական եկեղեցիին չկրնար ապրիլ»։

«Եթէ ձեզ համար արժէք չունի, ի՞նչ
ու բարեկամներ, մայրեր, քոյրեր, կը-
րակի ու սուրբ բերնէ անցաք և չթրը-
քացաք, մէկ մէկ փաթթոյ չկապեցիք
ու չապրեցաք հանգիստ ձեր շէն տունե-
րուն մէջ։ Հիմա, ի՞նչու հոս եկած էք,
գացէք, ձգեցէք կրօնը, ո՞վ ձեզ կ'ստի-
պէ, որ մնաք Բրիստոնեայ, գացէք հոն,
ձեր երկիրները ու փոխեցէք ձեր կրօնը։
Ո՛չ, չէք կրնար։ Հայուն հոգին թրը-
ծուած է կրօնական աւելի ճիշդ Առա-
քելական եկեղեցիի մաքուր հաւատքով
և գուք կաք, ու կը մնաք Հայ և Հայու
զաւակ, Հայ եկեղեցիի գաւակ»։

«Ձեզի նման Պօղոս Առաքեալն ալ
ժամանակին հալածեց եկեղեցին, բայց
երբ Երուսաղէմէն Դամասկոս կ'երթար
ցնցում մ'ունեցաւ, աչք ունէր ու չէր
տեսներ և ձայն մ'ըսաւ. «Սաուուդ, Սա-

ուդ ինչո՞ւ զիս կը հալածես. Դժուար
բան է խթանի դէմ կից զարնել։ «Այո,
այսոր նորէն դժուար բան է խթանի դէմ
կից զարնելը։ Դուք անհատաբար զու-
ցէ կարենաք առանց կրօնի ապրիլ, բայց
Հայը հաւաքաբար առանց կրօնի չկրնար
ապրիլ. մինչև այսօր ապրած է կրօնով
ու ապագային նոյնպէս պիտի ապրի կը-
րօնով»։

«Հարցում մ'ալ ունիք, Սրբազան,
մըր է խաչին տուած երջանկութիւնը։
Իրապէս առաջին ակնարկով շատ ճիշդ
կը թուի այս կասկածը եւ ուստի ես ալ
ձեզի հետ կ'ըսեմ. «սա հին կրօնը մէկ
կողմ նետեցէք, նոր ճշմարտութիւննե-
րու, նոր զողափարներու հաւելէ վա-
ղենք, հինը հինցած է, անարժէք է»։

«Ձխալիք բարեկամներ. հնութիւն-
ներն են, որ արժէք ունին։ Ձեր գոր-
գերը գիտամբ կը հինցնէք, որպէսզի
աւելի սուղ արժեն (երբեմն այսպիսի
սրաբանութիւններ նշգրաղի նման կը
ծակէին ժողովուրդին սիրտը)։ Ճշմար-
տութիւններ կան, որ դարհրով ճշմար-
տութիւն են, օրինակ $2 \times 2 = 4$ ։ Պիւ-
թագորասէն մինչև այսօր, ամէն մարդ,
գոյն ու պատուաւոր մարդն անգամ ա-
սով հաշիւ կ'ընեն։ Սր. Գրքի ճշմար-
տութիւնները $2 \times 2 = 4$ ի պէս են, ատոր
համար է, որ 20 դարէ ի վեր նոյնը կը
մնան, չեն փոխուիր ու չպիտի փոխուին,
թէ և ձեր հաշիւներուն մէջ շատ յաճախ
 $2 \times 2 = 3$, 5 կամ $2 \times 2 = 5$. այդպէս չէ՞,
խաբելու, գոյն ու խօսք փոխելու սովոր-
ութիւնը չունի՞նք շուկայի մէջ։ Մարդ-
կային ճշմարտութիւնները այսպէս են։

«Խաչն ու անկէ բղխող ճշմարտու-
թիւններն են, որ անփոփոխ կը մնան։
Իսկ թէ ինչո՞ւ երջանկութիւն չէ տուած։
Անոր պատճառը մեր մէջ փնտռենք»։

«Խաչը ըսաւ. «Սիրեցէք մէկգմէկ»,
իսկ մենք զիրար կ'սպաննենք։ Ո՞ւր է
գժբաղդութիւնը։ Սիրեցիք և գժբա՞ղդ
եղաք։ Ոչ, այլ չսիրեցինք, ատեցինք

* Այս ակնարկումը թերի կը գտնենք։ Ի. Խ.

ու եղանք դժբաղդ:

«Հիմա, որ տուն պիտի երթաք կարգացէք Գաղատացիս գիրքը եւ խնդրեցէք խաչեալէն, որ համարձակութիւնը տայ իր խաչով հպարտանալու»:

ՆԵՐԿԱՅ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Բ.

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՆՅ ՊԱՇՏԱՄՈՒՆԲԸ

«Պաշտամունքը այն միջոցն է որով մանուկներու հոգիները Աստուծոյ առջեւ բացուելով կեանքի կենսական ընկերակցութեան մէջ համագործակցութիւն կը սորվին»:

Մարդիկ կը տարբերին պաշտամունքի միջոցներուն մէջ, բայց կը համաձայնին անոր նպատակին մէջ:

«Անոր անմիջական նպատակը հոգեւոր կեանք ստեղծել ու մշակել է: Դուրսը այնպիսի միջավայր մը եւ ներսը, հոգիին մէջ, այնպիսի վիճակ մը ստեղծել որ մանկան հոգին եւ Աստուծոյ հոգին իրարու հպին, եւ մանուկը միտքով, զգացումով ու կամքով Աստուծոյ կեանքին հաղորդ ըլլայ աւելի ազատ, աւելի լայն մթնոլորտ մը բարձրանայ, ինքզինքը Քրիստոսի պէս կառավարել կարենալու համար»:

Կ. Դպրոցներու մէջ նոր սերունդը՝ իր օրուան պաշտամունքը կատարելու ստեն, ապագայ սերունդի կատարելիք պաշտամունքի հիմերն ալ կը կառուցուին: Կրօնական զգացումները հո՛ս հաստատուն հիմերու վրայ կը դնէ, Քրիստոնէական բարձր եւ սակայն գործադրելի սկզբունքները հո՛ս կը սորվին:

Ուրիմն պէտք է ուշիմ ճարտարապետներու նման այս գաղափարական եւ կիրարկելի սկզբունքները ժայռի վրայ

հիմնելով, ուշադրութեամբ բարձրացնել հոգին:

Պէտք է հասկնանք թէ պաշտամունքը ոչ միայն մտքի, այլ ամբողջ անձնաւորութեան պաշտօնն է: Պէտք է սորվեցնել թէ ան ճամբայ մըն է՝ որուն մէջէն հոգեւոր սնունդը կեանքին հասնելով կ'աճեցնէ, կը լուսաւորէ եւ կ'ազնուացնէ անձնաւորութիւնը: Ժամանակն է հասկնալու թէ մենք զԱստուած ճշմարտապէս կը պաշտենք մեր սրտերուն մէջ ո՛չ արտաքին ծիսակատարութիւններով եւ սովորական արարողութիւններով (թէպէտ շատք կարեւոր դեր ունին) այլ մեր առօրեայ կեանքով: Շեշտելու ենք թէ Յիսուսի համար ոչ միայն տաճարը աղօթքի սրբավայր մըն էր, այլ իր կեանքը աղօթք մը եղած էր: Ան մանկանց պաշտամունքին համար տեղ կամ ժամ չ'որոշեց: «Այնպէս թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջեւ որ տեսնեն ձեր բարի գործերը»:

Հոս պահ մը կենալով, կրնանք ըսել թէ այս կեանքը ճշմարիտ եւ գործնական ըլլալու համար մանուկներ նախ Աստուծոյ մասին անկեղծ եւ առողջ գաղափարներ ունենալու են: Սամարացիներու եւ Հրեաներու մէջ տարբեր էր Աստուծոյ գաղափարը եւ հետեւաբար տարբեր էր պաշտամունքի կատարումը:

Պէտք է մանուկներու ներշնչել ու գաղափարը թէ Աստուած Բարի Հայր, Սիրող Բարեկամ եւ միասին ապրելու յօժարակամ Ընկեր մըն է: Մեր գնահատական զգացումները մեզ միշտ կը մղեն բարեկամներու համար ծառայութիւն մատուցանելու: Այսպէս ալ, երբ մանուկը իր փորձառութեամբ հասկնայ թէ Աստուած զինք սիրող բարեկամ մըն է, ինքնաբերաբար պիտի թելադրուի Անոր հետ գործակցելու կեանքի մէջ:

Ի՞նչ կրնայ ըլլալ պաշտամունքի նըպատակը այս կերպընկալ վիճակի մէջ եղող աստուածային արարածներուն հա-

մար, եթէ ոչ տոթրեայ կեանքի պայքարին մէջ յաղթական յառաջանալու համար ներքին եւ արտաքին ներգաշնակութիւն մը յոռաջ բերել:

Անգամ մը՝ երբ Կիրակնօրեայ Վարժարանի շրջանաւարտներով պտոյտ մը կը կատարէինք Աթէնքի մէջ, եւ զըպրոցի պաշտամունքներու մասին անպատօն կերպով բարեկամարար կը խօսակցէինք, խումբին մէջէն զանազան անձեր այլ եւ այլ գաղափարներ յայտնեցին, որոնցմէ կ'արժէ երկուքը յիշել: Մէկը սապէս ըսաւ. «Մեր այս մանկական պաշտամունքը ինծի ամենասիրելի եղած է, քանզի ան իմ առօրեայ կեանքիս համար ներքին առկունքութիւն տուած է»: Երկրորդը աւելցուց. «Ես միշտ հետաքրքրութեամբ կը հետեւիմ պաշտամունքին՝ այն հատուածով թէ իւրաքանչիւր Կիրակի նոր թափ մը պիտի ստանամ, եւ միշտ վերացած կը վերագառնամ որտի այնպիսի գոհունակութեամբ մը որ կը լուծէ իմ առօրեայ դժուարութիւններս»:

Գ.

ՊԱՇՏԱՄԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԳՈՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ

Պաշտամունքի համար պէտք է օրուան յարմարագոյն ժամը գտնել եւ միշտ նոյն առին Պատարել զայն, քանզի փոփոխութիւնը յաճախ վնասակար է: Իւրաքանչիւր ժամը իր առաւելութիւնը եւ թերութիւնը կ'ունենայ:

Մենք սովորաբար եկեղեցական եւ դպրոցական սրահներուն մէջ կ'ունենանք այս պաշտամունքները. անոր համար անդա՛նք անյամաները՝ Դիմաքի առնելով, պէտք է ընտրել յաճկացուած ժամերուն յարմարագոյնը: Եթէ եկեղեցիին մէջ մէկէ աւելի ժողովներ կ'ըլլան յարմար չէ այդ հաւաքոյթներու միջեւ, կարճ ժամանակի մը մէջ աճա-

պարանօք պաշտամունքը կատարել, քանզի այնպիսի պաշտամունք մը, իր ազդեցութիւնը կը կորսնցնէ: Պէտք է առնուազն երկու կամ աւելի ժամեր շէնքը Կիրակնօրեայ Դպրոցի տրամադրութեան ներքեւ գտնուի: Ուշադրութիւն ընելու է, որ անօթութեան ժամերուն չհանգիստի ան, քանզի ոտամոքսի պարապութիւնը արդէն ներքին անհանգըստութիւն մըն է մանուկներուն:

Ամերիկայի մէջ, չատ մը կազմակերպուած Կիրակնօրեայ Դպրոցներ ընդհանրապէս կէս օրէ հոգք կ'ունենան իրենց հաւաքոյթը: Ասոր առաւելութիւնը սա է որ, քիչ մը երկայն ժամանակ ունենալով կրնան ներկայ պաշտամունքէն վերջ՝ անոր յաջորդին մասին կարգադրութիւններ ընել, եւ կամ ընդհանուր պաշտամունքներու մասին խորհրդակցել ուսուցիչներու հետ:

Օրուան առաջնորդը պէտք է որ մօտէն հսկէ իր գործին եւ ունենայ իր գրաւոր կարգացոյցը: Երբ նիւթերը կը փոխուին, ասիկա կարելի եղածին չափ արագ եւ կարգապահութեամբ պէտք է ընել:

Ժամանակի յարմարագոյն երկայնութիւնը՝ սովորական յայտագիրով հինգ քառորդ ժամ է. բայց՝ երբեմն բացառիկ պարագաներու տակ կարելի է երկարել զայն, ներկաներու հետաքրքրութիւնը պահելու պայմանաւ:

Օրինակի համար, աշակերտներուն համար որչափ սիրելի է պայծառ օր մը ճոխ յայտագիրով բացօթեայ տեղ մը պաշտամունք մը կատարել: Եւ կամ որչափ ուրախութեան պատճառ պիտի ըլլայ՝ անտառ մը, լիւս մը, գետեզերք մը պտոյտի տանելով բնութեան գեղեցկութեան վրայ մանուկներու ուշադրութիւնը հրապուրել եւ իրենց հետաքրքրութիւնը արթնցնել: Եթէ բոլոր օրը այնպէս անցնեն, անոնք ոչ միայն պիտի չձանձրանան այլ բնականօրէն

պիտի առաջնորդութիւն կրկնելու հարիւր
չորրորդ սաղմոսը, որուն մէջ սաղմո-
սերգուն ընթացեալն Աստուածային շա-
նորհքները թուելէ վերջ կ'ըսէ. «Տէրջը
պիտի երգեմ իմ կեանքիս մէջ. սաղմոս
պիտի ըսեմ իմ Աստուծոյս՝ Անոր վրա-
յով իմ մտայնութիւնս քաղցր պիտի ըլ-
լայ. ես Տէրջմով պիտի ուրախանամ»:
Սեղանիք Կ. Ս. ՅԱՐԱՃԵԱՆ

ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ (3)

(Վեր. Մ. Կ. Փափագեանի)

ՀԱՅԵՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Թուականէս մի քանի չարաթ առաջ
Հոգով կը գտնուէի, որ առիթը ունե-
ցայ կարճ տեսակցութիւն մ'ունենալու
կաթոլիկ եկեղեցիին պետին Ս. Պապին
հետ և այցելելու Ս. Պետրոս մայր եկե-
ղեցին: Քոստայանոյ երկու Անգլիկացի
կրկնելու հարցուցի թէ կրնա՞ն հոս աղօ-
թել և ժխտական պատասխան ընդու-
նել: Ինծի համար ևս անկարելի եղաւ
այդ. քանզի չէնք չքեղ շինուածքը
և անոր գերազանցօրէն ճոխ և արուես-
տագիտական մեծ արժէք ներկայացնող
նկարներն ու քանդակները մարդուն
միտքն ու ուշադրութիւնը այնքա՛ն կը
գրաւէին և կ'զբաղեցնէին, որ անկա-
րելի կ'ըլլար միտքը ուրիշ տեղ ուղղել:

Լուռ աղօթքէ և երգեցողութենէ մը
ետքը Վեր. Փափագեան չարունակեց:

Ներկայիս Յունաստանի 42 զանազան
վայրերուն մէջ Հայեր կան: Առաջնոր-
դարանի հաշուին համեմատ ըստ Հայոց
թիւն է 35500, որ սակայն օրէ օր պակ-
սելու վրայ է, զէպի Ֆրանսա և Հար. Ամերիկա
չարունակող զաւթումի հո-
սանքին պատճառաւ: Կարևոր կեդրոն-
ներու Հայոց թիւն է,

Աթէնք	10 000
Ֆիքս	5 000
Սինկրու	2 000
Գոգինիա	6 000
Լիփազմա	5 000
Սելանիք	3 000

Սելանիք երկրագործական և ճար-
տարարուեստական կեդրոն մ'է: Հոս
հաստատուած է Կիւլպէնկեան Վարժա-
րանը որ ունի 200 աշակերտներ, և ք-
րուն չէնքի պէտքը զոհացնելու համար
Տիար Կիւլպէնկեան երկու միլիոն վճա-
րած է:

Այս քաղաքին մէջ լաւ գործ ունի
Դանիական Առաքելութիւնը. հոգեւոր մի
արժէք ունեցող ձեռնարկ մ'է այս, որ
կատարեալ համակրութեան մէջ է Հայ
Աւետ. Եկեղեցիին հետ: Եկեղեցիին
առջև լաւ գործ բացուած է հոս:

Յունահայ զաղթականութեան ամե-
նակարևոր կեդրոնն է Աթէնք, որ հաս-
տատուած են երկու կայրեր կրթական
հաստատութիւններ. Ա. Ամերիկեան
Աղջկանց Գոլէճ և Բ. Թիք Սփուլ ալ ին-
քնըն: Վերջինին նախագահն է Մր.
Փայ, որ ներկայիս հիւանդ է և կը զըս-
նուի Ամերիկա:

Միսիս Մարտինի հսկողութեան տակ
կը գործեն խումբ մը պայպըլ փումըններ:
Իսկ Տոգթ. Մարտին գեղեցիկ հիւան-
դանոց մը կը կառավարէ:

Գոգինիոյ Հայ Աւետ. Ժողովուրդը
նորակապցնելու համար չէնք մ'ունի.
Իրենց հովիւն է աշակերտ Պատ. Գրի-
գոր Տէմիրճեան, որ Սփուլ ալ ընդուն
ուսումնաւարտ եղած է: Գոգինիա՝ Ա-
թէնքի և Իրէի մէջտեղ Անատոլացի
զաղթականներու կողմանէ շինուած նոր
քաղաք մըն է, և ունի 75 000 բնակչու-
թիւն:

Աթէնքի մէջ երկու բարեկամներ ու-
շադրութիւնս գրաւեցին: Ասոնցմէ ա-
ռաջինն է Վեր. Կ. Սթամպուլեան որ
Եպիսկոպոսի մը պաշտօնը կը կատարէ:

* Խօսուած Սուրբոյ Հայ Աւետ. Միւս-
թեան տարեկան Ժողովին մէջ Ի Պէյրութ:

Իսկ երկրորդն է Փրոֆ. Լ. Լեոնեան որ վերջերս անգլիերէն լեզուով գիրք մը հրատարակեց The Moslem Mentality (Իսլամական Մտայնութիւն) անունով: Անոր մասին սա քննադատութիւնը հազաւ թէ աւելի շիտակ պիտի ըլլար զայն կոչել Turkish Mentality (Թուրք Մտայնութիւն):

Յունահայ աւետարանականութեան մասին իր ամփոփ տեղեկութիւնը տալէ ետքը Վեր. Փափազեան իր օրուան պատգամը տուաւ հետեւեալ կերպով:

Նոր կտակարանի գիրքերը ժամանակագրական կարգով չեն շարուած, եթէ այդպէս եղած ըլլար անոր առաջին գիրքը թիսադոնիկեցոց գրուած Ա. Թուղթը պիտի ըլլար, որ Յիսուսի ծնունդէն 52 կամ յարութիւնէն 20 տարի ետքը գրուած է, և Քրիստոսի մասին առաջին գրաւոր վկայութիւնն է: Այս գրութեամբ չորս իրողութիւններ կը հաստատուին.

ա. Յիսուս Քրիստոս զաւիք բարկութիւնէն կ'ազատէ: Յիսուս Քրիստոս Փրկիչ է:

բ. Աստուած Քրիստոսը յարոյց մեռելներէն. Յիսուս իրապէս մեռաւ և յարեաւ:

գ. Քրիստոսի հաւատալով փոփոխութեան ենթարկուած են:

դ. Յոյս մը ունին. Քրիստոսի նորէն գալուստին կ'սպասեն:

Առաքելական Եկեղեցիին և մեր քաղաքութեան միջև տարբերութիւն մը կայ: Մենք ընդհանրապէս կ'ըրազինք ճշմարտութեամբ և սկզբունքներով, իսկ Առաքելական Եկեղեցին կ'ըբազի անձնաւորութեամբ: Մեր Աւետարանը ըսկզբունք է, իսկ անոնցինը՝ կենդանի Քրիստոս մ'է: Քրիստոսի Աւետարանը՝ Աւետարաններու Քրիստոսն է: Անոնք փիլիսոփայութիւնն ու ճշմարտութիւնները յաջորդ գարերուն յետաձգեցին: Իսկ այս վիճակը անոնց մէջ փոփոխութիւն մը յառաջ բերաւ:

Յոյն Օրթոտոքս Եկեղեցին լաւ հաստատուած է Յունաստանի մէջ, և սակայն անոր մէջ հոգեւոր շարժում մը կայ ներկայիս: Յոյն Օրթոտոքսները չեն ուզեր բողոքական ըլլալ, և թերեւ աւելի լաւ է որ անոնք չըլլան: Աղօթենք անոնց համար:

Ամփոփեց Տ. Ժ. Խ.
(Շար.)

ԱՅԼԵՒԱՅԼ

ՓՐԻՆՍ ԷՏՈՒԼՐՏ ԿՂԶԻՆ

Գանատայի կը պատկանի այս փոքր կղզին, որ հազիւ 145 մղոն երկարութիւն ունի: Բայց հակառակ իր պզտիկութեան մեծ կարեւորութիւն մ'ունի և ուշագրաւ երեւոյթ մը կը պարզէ տակաւին չխաղաղող այս երկրի վրայ: 1868էն մինչև 1927, այսինքն 59 տարուան միջոցին միայն մէկ ամուսնալուծում կատարուած է այս կղզիին մէջ որ 88000 բնակիչներ ունին ներկայիս: Վերջին 40 տարուան միջոցին և ոչ մէկ մահու պատիժ կատարուած է: Ոճիրներու թիւը իւրաքանչիւր հազար մարդոց մէջ Գանատայի ոճիրներու թիւին մէկ տասնորդէն պակաս է: Ասիկայ աւելի յատկանշական կ'ըլլայ երբ նկատենք թէ Գանատայի ոճրագործութեանց համեմատութիւնը ցած է:

Մինչ աշխարհս տնտեսական տագնապի մը մէջէն կ'անցնի եւ անգործներու բանակը կ'ստուարանայ՝ հոս անգործութիւն չկայ: Աղքատութիւնը այս կղզիին մէջ անծանօթ է: Գանատայի ուրիշ նահանգը եւ այս կղզին իրարու հետ բաղդատելով տնտեսած է որ, իւրաքանչիւր քառակուսի մղոնի մէջ այս կղզին կրկնապատիկը բնակիչներ, քառապատիկը արջառ, ութը անգամ աւելի հաւեղէն ունի քան Գանատան: Դարձեալ իւրաքանչիւր քառակուսի

մզանի մէջ այս կղզին Գոնաատայի ունէ նահանգէն աւելի է երկաթուղիի գիծեր, փոստատուներ, հեռագրական գիծեր, եկեղեցիներ ունի, այս կղզին՝ նաեւ դրամատուներու մէջ պահեստի դըրուած մարդ գլուխ աւելի դրամ ունի քան Գոնաատան:

Այս կղզիին զրեթէ միակ արտադրութիւնն է ՄԱՐԳԻ. Միայն՝ Միացեալ Նահանգաց մէջ 100 000 փրինս էտուըրտ կղզեցիներ կան, որոնք իրենց գրաւած դիրքերով պատիւ կը բերեն իրենց կղզիին. ակնաւոր բժիշկներ, յայտնի համալսարանական փրոֆէսորներ, մեծ դատաւորներ, կարող քարոզիչներ, նշանաւոր վաճառականներ այս կղզիին զաւակներն են:

Այս կղզին այսպէս շինողը եղած է բողոքական հովիւ մը, Տանըտ Մէքսանըտ անուն, որ ԺԹ. դարուն մէջ իր յառաջ բերած կրօնական արթնութեամբը մղիչ ազդակը եղած է ներկայ կեանքին՝ դրոշմելով անոր իւր հուժկու մաքուր հոգին:

ՄԱՐԳԻՈՒՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԻ

Կարգ մը գիտուններուն կարծիքին համեմատ բնութիւնը փակեալ զրութիւն մ'է, և կրնայ իր գոյութիւնը պահել և ինքզինքը բացատրել ֆիզիկական պատճառ և արդիւնքի օրէնքով, և օրէնքի միօրինակութեամբ: Բնական է որ եթէ այսպիսի տեսակէտ մը ընդունինք հրաշքը անկարելիութիւն մը կը զանաւորուի:

Տր. Ու. Պ. Սէլպի Օքսֆորտի փրոֆէսորներէն, «Մարդուն գլխաւոր գործը» նութիւն տակ «Թ'հը Բրիտըն Ուըրլտ» մէջ այս մասին զրեթով կ'ըսէ. —

Բնական աշխարհի մասին ուրիշ տեսակէտ մ'ալ կայ, որ աւելի ընդհանրացած է, և որ Աստուծոյ և հոգեւոր աշխարհի մը գոյութիւնը հաշուի կ'առ-

նէ և բնութիւնը միջոց մը կը նկատէ, որով ասոնք (Աստուած և հոգեւոր աշխարհ) կարենան գործել: Իրական հրաշքը պէտք է գտնուի մարդուն հոգեկան բնոյթին և զինքը չըջապատող նութեան աշխարհին միջև եղող յարաբերութեան մէջ: Լորտ Քէլվին սոփսր էր ըսել թէ «ֆիզիկական գիտութեան տեսակէտէն մարդկային արարածի ամէն մէկ ազատ արարքը հրաշք մ'է»: Հոգեկան երեւոյթները, մարդուն զգացումները, մտածումները և կամեցողութիւնները ֆիզիկական աշխարհի մը տեսակէտին համեմատ բաժատրելու բոլոր փորձերը ձախողած են: ... Մարդը բարոյական էակ մ'է. ասկէ կը հետեւի թէ ան որոշ չափով ազատութիւն մ'ունի և կարող է զայն գործածել: Եւ ասիկա կը նշանակէ հաւատալ անհատականութեան և անձնաւորութեան, որ կը ներկայացնէ բան մը որ ֆիզիկական աշխարհին տեսակէտէն կրնայ միայն հրաշք մը կոչուիլ...:

Եթէ մարդիկ հոգեւոր էակներ են ուրեմն անոնք այս նութեան աշխարհէ չեղող կարգի մը կը պատկանին, հետեւաբար կրնանք եզրակացնել թէ անոնք հոս տեսական քաղաք մը (հայրենիք) չունին, այլ բնականօրէն կը փնտռեն մէկը որ գալիք է: Ուրիմն իրաւունք ունինք եզրակացնելու թէ մարդուն զըլխաւոր գործն է այս հոգեւոր կեանքի մշակումը, որուն հետ միասին կ'երթայ գալիք կեանքի մը համար պատրաստութիւն մը: Եւ սին երեւակայութիւն մը չէ խորհիլ թէ այս ֆիզիկական տիեզերքն իսկ կը ծառայէ այս նպատակին: Փրոֆ. Հուայթհէտ ըսած է. «Տիեզերքը մեզի երկու կերպարանք կը յուսնէ. մէկ կողմէն ան ֆիզիկապէս կը մաշի, միւս կողմէն ան հոգեւորապէս կը բարձրանայ: Ահա այսպէս՝ ժամանակի մեր չափովը անզգալի դանդաղաշարժութեամբ ան կ'անցնի նոր ստեղծագործոյ պայմաններու, որոնց տակ ֆիզիկական աշխարհը ինչպէս որ զայն հիմա կը ճանչնանք, հազիւ պիտի գտնուի որ ոչնչութիւն է»:

ԱՆԿԼԻԳԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Յուլիոս ամսուան միջոցին Անկլիկան Եկեղեցիին բոլոր Եպիսկոպոսներուն և Արևելքի Հին Եկեղեցիներու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ մեծ ժողով մը եղաւ Լամպէթի պալատին մէջ, ուր խնդրոյ առարկայ դարձաւ Եկեղեցական միութեան հարցը։ Ասիկա Անկլիկոս Եկեղեցիին զարաւոր մէկ եւրազը եղած է։

Բարեկարգութեան շրջանին Արքեպիսկոպոս Գրէնմըր 1548ին Մեկանդթոնի գրած իր մէկ նամակովը բոլոր Բողոքական Եկեղեցիները կը հրաւիրէր Միութեան։ Կալվին ևս այս իմաստով Արքեպ. Գրէնմըրէն նամակ առած և շատ համակրանքով պատասխանած էր։ Անգլիոյ Էսուրբա Զ. Թագաւորի մահը և իր մարտիրոսացումը այս ձեռնարկը ձախողութեան մատնած էր։

Լամպէթի ժողովին մէջ Հայ Առաք. Եկեղեցին կը ներկայացնէր Տ. Ղեւոնդ Եպիս. Դուբեան։ Հայց. Եկեղեցին՝ Յակոբիկեան (Ասորի), Ղըպտի եւ Եթովպական Եկեղեցիներու հետ կ'ընդունին թէ Քրիստոսի մէջ մէկ բնութիւն կայ, իսկ միւս բոլոր Եկեղեցիները երկու բնութիւն կ'ընդունին՝ Քաղկեդոնի ժողովին մէջ որոշուած բանաձեւին համեմատ։ Ղեւոնդ սրբազան լայնամասութեան առաւելագոյն աստիճանը ջոյց առաւ իր այն յայտնութեամբը թէ Հայց. Եկեղեցիին քրիստոսաբանութիւնը էապէս նոյնն է Քաղկեդոնեանի հետ, որով զայն ընդունելով Հայց. Եկեղեցին իր զաւանանքին դէմ հակասած չըլլար։ Հայց. Եկեղեցին Քաղկեդոնի քրիստոսաբանութիւնը պաշտօնապէս ընդունելով պատմական նոր շրջան մը թեւակոխած պիտի ըլլայ։

Ի ՊԱՏԻ ԿԱԼՎԻՆԻ

Մեծ Բողոքական բարեկարգիչ Կալվինի յիշատակը յաւերժացնելու համար Յրանսայի Նուայյօն քաղաքին մէջ իր ծնած տան հիմերուն վրայ մեծ դարձած արարապետութեան ձեւով շէնք մը շինուած է, «Մէզան տը Գալվին» (Կալվինի տունը) անուանով։ Այս առթիւ կատարուած է նուիրման փառաւոր պաշտօն մը մասնակցութեամբ և ներկայացուցչութեամբ շատ մը երկիրներու եկեղեցիներուն և կաղմակերպութիւններուն։

Նուայյօնի Կաթոլիկ քաղաքապետը իր բարի գալուստի խօսքը հիւրերուն ուղղելով ըսած է. «Նուայյօնի մեծ դաւակին յիշատակարանը պիտի պահուի և քաղաքապետութեան կողմէ պէտք եղած կերպով խնամքի առարկայ պիտի ըլլայ։»

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀՐԱՇԱԼԻ ԳԻՐՔԸ

Այս գիրքը հազար հիւնգ հարիւր միլիօն ստրուան պատմութիւնը կը խօսի։

Շրջակո քաղաքին մէջ Բնական Պատմութեան Թանգարանին մէջ երեք նոր ընդարձակ սրահներ պիտի շինուին, որուն մէջ երկրի պատմութիւնը պիտի յուշագրուի։ Այս երեք սրահներէն մէկը աւարտած է և բոլոր գաղափարը իրականացած պիտի ըլլայ 1933ին։ Այս սրահներուն մէջ զետեղուած ժայռեր, բրածոներ, վերականգնուած բուսական և կենդանական նմոշներ, նկարներ և արձաններ տալաւ ինչ չպարտաւ ստեղծագործումի պատմութիւնը պիտի ներկայացնեն։

Հիմա աւարտած սրահը երբ մտնենք սրահին կեդրոնական միջոցը զբաւուած պիտի տեսնենք հնագոյն կենդանիներու զանազան կմախքներէ, որոնցմէ ո-

մանք փոքր կառույցների մեծացումը, երկարությունը ունենալը: Պատերու մեծ քանակությամբ կառուցումը մեծ պլանի տեսանկյունից կենդանական հարստության բաժանումը, և պատերու վրայ մեծ պատկերներ աշխարհի տեսարաններու և անասուններու պատկերներու հիմա ոչ մէկ մարդկային աչք չէ տեսած: Այս պատկերներու գրքին առաջին գլուխը կը ներկայացնէ աշխարհը տակաւին իր քառասուն վիճակին մէջ, երբ ցամաքը և ծովը ու ամպը իրարմէ բաժնուելու ջանքին մէջ էին: Ապա կը ներկայացնէ առաջ ծերերու մէջ ապրող կեանքի նախատիպը: Ապա կարգով կը պարզէ գանազան շրջաններու կեանքը և երկրի վիճակը մինչև ըստնաւորներու դարը, երբ նախամարդը երեւան կողոյշ: Երկրորդ սրահին մէջ նախապատմական մարդը պիտի ներկայացուի, որուն ոսկորները շատ մը տեղեր գտնուած են, և զոր գիտունները կը կոչեն Նէանտրթալի տիպը, առաջին անգամ գտնուած տեղին անունով: Արձանագործները գիտուններու ցուցմանքին համեմատ նախապատմական մարդուն արձանները շինած են: Այս շրջանի մարդը, միլիոն մը տարիներ առաջ ընտանիք կազմած է, նախնական հագուստներ, գործիքներ և զէնքեր շինած է, աշխատանքի բաժանում կատարած է: Տակաւին ոչ մէկ կենդանի չէ ընտանեցուցած, բայց բոլոր դարերու մեծագոյն զիւտը բնած է, այսինքն կրակը գտած և զայն գործածած է: Ուրիշ արձաններ պիտի ներկայացնեն նախապատմական մարդուն գանազան շրջաններու պատկանող տիպերը և անոնց կեանքը, մինչև որ համայնք մեզի ծանօթ պատմութեան արշաւոյսը, Քրիստոսէ 10 000 տարիներ առաջ: Երկրորդ սրահը պիտի ներկայացնէ մարդկային կեանքը ինչպէս որ նա է այսօր երկրի վրայ: Մարդկային մարմնի և կապիկներու կմախքները քովէ քով պիտի

կանգնուին, և բնական մեծութեամբ 20 պատկերներ ապրող գլխաւոր մարդկային ցեղերու ֆիզիքական չափուութիւնները պիտի ցուցնեն:

Այս մեծածաւալ հաճախորդ պատմութիւնը տակաւին շատ թերի է, մեծապէս կարօտ յետագայ դարերու գիտուններուն սրբագրութեան:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Հալէպի Պոյզ Հայ Սփռչը իր այս տարուան դպրոցական շրջանը սկսաւ Հոկ. 1ին 135 աշակերտներով, որոնցմէ 34ը Գողթնական երկու կարգերուն մէջ, և 36ը նախապատրաստական երկու կարգերու մէջ կը գտնուին: Սա վերջինը այս տարի առաջին անգամ ըլլալով իրր զատ բաժին մը պիտի կառավարուի զատ շէնքի մը մէջ:

Տիար Յ. Պապալեան, նախապատրաստական բաժնի աւագ ուսուցիչը, և Տիար Ս. Մաթոսեան, կրտսերներու բաժնին (Junior High School) աւագ ուսուցիչը, Պրուֆանայի մէջ Սեպտեմբերին տեղի ունեցած Կրթական Ժողովին մասնակցեցան: Ժողովին տիրող ոգիէն անոնք շատ ախորժեցան և զայն շատ արժէքաւոր գտան: Անոնք իրենց հետ նոր թելադրութիւններ բերին, զոր տեղեկագրիցին ուսուցչական ժողովին մէջ:

Այս տարի դպրոցին տարրեր բաժնիներուն մէջ շատ մը նոր մեթոտներ կիրարկուելու սկսած են:

Ուսուցչական մարմնի վրայ աւելցած նոր անդամներն են, Տիար Ֆէրաճուլլահ Էզրաֆ, ուսուցիչ քիմիաբանութեան և բնագիտութեան. Մը Գուլըր, ուսուցիչ անգլիերէնի և պատմութեան, և Տիար Բըզզ Ուլլահ Նամպէրթ, ուսուցիչ արաբերէնի:

Հինգերորդ դասարանի (նախապատրաստական բաժնի) մէջ քիմիաբանու-

թեան տարրական աշխատանոցային գասընթացք մը բացուած է :

Գոլէճի բաժնին շէնքը ելեկտրականութեամբ օժտուած է :

Ուսանողական գործունէութիւնը վարելու համար աշակերտները ընտրած են հետեւեալ մասնախումբերը .— Մարմնամարզական, Գրական, Կրօնական, Բնկերային :

Տր. Պայպլ, Երիցական Պարտի քարտուղարը, խօսեցաւ Հոկ. 10ի առտուան պաշտամունքի միջոցին :

Ուսանողական առաջին կրօնական հաւաքոյթին մէջ աշակերտները խօսեցան Հալէպի, Համայի և Քէսապի մէջ իրենց վարած Ամառնային ամենօրեայ Ս. Գրքի Դպրոցին մասին :

Անթիլիսիւսի ընծայարանին համար նախատեսուած տարեկան 16 000 տուար ծախքին 6-7000ը պիտի հայթայթուի Բիշիֆի կողմանէ, իսկ 5000 տուարը Ամիքիկայի հայութեան կողմանէ : Գալիֆօրնիան պիտի մասնակցի 1000 տուարով : «Փարոս»

ԼՈՍ ԱՆԿԷԼԷՍԻ մէջ Հայ Առաք. և Հայ Աւետ. եկեղեցիները կը գործակցին յառաջիկայ չրջանին համար Հայ Դպրոցի մատակարարումին մէջ :

ԷՔԻՋ-ՕԼՈՒԳԻ մէջ, Քէսապ, ամառուան երեք ամիսներուն միջոցին իբր քարոզիչ գործած է Տիար Ե. Տէր Միլըրտիչեան, միւսնոյն աստին վարելով Ս. Գրքի ամենօրեայ դպրոց մը մէկ ամսուան համար : Յառաջիկայ դպրոցական չրջանին միջոցին հոս իբր ուսուցիչ պիտի պաշտօնավարեն Տիար Տիգրան Քասունի, որդին Վեր. Ե. Քասունիի, և Օր. Մարի Թութիկեան :

ՀԱԼԷՊԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ բնակչութեան թիւն է 477,675 կառավարական վերջին վիճակագրութեան համեմատ, կը գրէ Գուրիէ Տր Սիւրի : Այս թիւէն դուրս կը մնան վրանաբնակ Պէտէվիները և տտկաւին չարձանադրուած թէ քաղա-

քի և թէ գիւղերու ստուար թիւով բնակիչները :

ՀԱՅԵՍՏ. իր 35 հազար բնակիչներով գեղեցիկ նաւահանգիստ մըն է : Իսլամ և Հրեայ բնակիչներու թիւերը իրարու զրեթէ կը հաւասարին : Հայերուն թիւն է երեք հարիւր, բոլորն ալ պատեւրազմէ ետքը հաստատուած : Մեծ մասամբ Կիլիկիցի, (Հաճընցի, Այնթապցի Ուրֆացի ևյլն) : Հայերը ունին Երիտասարդաց Կրթասիրաց Միութիւն մը 25 անդամներէ բաղկացեալ որոնց նախաձեռնութեան արդիւնքն է ներկայ ազգային վարժարանը : Դպրոցը ունի 60ի մօտ աշակերտութիւն մը երկու մնայուն և մէկ այցելու ուսուցիչներով և կը բաղկանայ երկամիայ մանկապարտէզէ մը և եռամիայ ծաղկոցէ մը : Ունին քահանայ մը որ Երուսաղէմի Պատրիարքութեան կողմէ վարձուած սենեակի մը մէջ կրօնական պաշտօնները կը կատարէ : Հայութիւնը անտեսապէս լաւ վիճակի մէջ կը գտնուի և կը բաղկանայ պաշտօնեաներէ, արհեստաւորներէ և սակաւաթիւ վաճառականներէ : Էջմիածնի յառաջիկայ եկեղեցական ժողովին մէջ Պաղեստինի հայութիւնը ներկայացնելու համար իբր պատուիրակ առաջարկուած է Միլանի մէջ բնակող յայտնի վաճառական Տիար Թորոս Զարմանեան :

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Գուհունակութեան արժանի է սա պարագան թէ այս տարուան միջոցին կարգ մը անգիրու և եկեղեցիներու մէջ «Նոր Աւետարներ»ի բաժանորդներու թիւը զգալի կերպով աւելցած է : Ուրախութեամբ կը յայտնենք թէ Հալէպի Քէմբի Հայ Աւետ. եկեղեցին իր բաժանորդներու թիւը նախկինն աւելի քան կրկինը բազմացուցած է մասնաւոր ջանքերու շնորհիւ, այնպէս որ բաժանորդներու թիւը 38 էն 81ի բարձրացած է :

صاحب الامتياز و مدير المسئول

تسبب قريه هاروتونيان